Վարքի կառավարման ռազմավարություններ

Լիանա Սանամյան
ԱՕԱ հիվանդանոցային դպրոց
Հատուկ մանկավարժների ակումբ
ՀՀ, ք.Երևան
27.05.2022

Ուսուցչի հիմնական խնդիրներից է ապահովել միջավայրի կառուցվածքն ու կարգուկանոնն այնպես, որ աշակերտը կարողանա իրականացնել իր աշխատանքը, սովորել, խաղալ, զգալ սեր և հոգատարություն, կարողանա ուրախանալ և զվարճանալ:

Մարտահրավերների խմբերը

- Սոցիալական մարտահրավերներ – հարաբերություններ այլ անձանց հետ - ընկերանալ հասակակիցների հետ, առօրյա կյանքի սոցիալական պահանջներին անհամապատասխանություն:
- Էմոցիոնալ մարտահրավերներ – ցածր ինքնագնահատական, ընկճախտ, քրոնիկ տխրություն:
- Վարքային մարտահրավերներ – ագրեսիվ, հակասոցիալական և անցանկալի վարքի այլ դրսևորումներ:

Մարտահրավերներ

- Սոցիալական, էմոցիանալ և վարքի մարտահրավերներ - կարող են հանդես գալ բոլոր տարիքային խմբերում՝ անկախ սոցիալական, մշակութային, ռասսայական պատկանելությունից:
- Անկախ խնդիրներ են, բայց կարող են նաև փոխկապակցված լինել: Օրինակ՝ էմոցիոնալ խնդիր ունեցող երեխան, որն ինքնագնահատականի խնդիր ունի, կարող է ցուցաբերել որոշակի վարք, որը հանգեցնի սոցիալական մեկուսացման:
- Աշակերտը ակադեմիական ոլորտում դժվարություններ ունի, արդյունքում նա այնքան ջանք ու ժամանակ է վատնում, որ հասակակիցների հետ սոցիալական հարաբերություններ հաստատելու ժամանակ չի ունենում: Դպրոցն ավարտելուց հետո նա ավարտել է ԲՈՒՀ-ը և մասնագիտություն ու շատ լավ աշխատանք ունի, սակայն մեծահասակ տարիքում նույնպես ընկերներ չունի:

Սոցիալական մարտահրավերներ

- Սոցիալական հմտություններ - հմտությունների այն ամբողջությունն է, որոնք անհրաժեշտ են ամենօրյա սոցիալական պահանջներին համապարաստանելու համար:
- Ամենադժվար խումբն է - երեխայի դպրոցական կյանքի համար սոցիալական հմտություններում թերացումը կարող է ավելի դժվար մարտահրավեր լինել, քան ակադեմիական խնդիրները:
- Եթե երեխան չունի բավարար սոցիալական հմտություններ, նա չի կողմնորոշվում ինչպես իրեն պահել խմբում, ընկերների հետ և այլն: Այս երեխաների կարող են խնդիրներ չունենալ ակադեմիական ոլորտում:

Էմոցիոնալ մարտահրավերներ

- Էմոցիոնալ մարտահրավերները – խանգարում են ակադեմիական ոլորտին - այլ խնդիրներ, որոնք խանգարում են կենտրոնանալ գիտելիքների և հմտությունների վրա:
- Ակադեմիական առաջադիմություն ունեցող աշակերտներն էնոցիանալ բավարարվածության բազմաթիվ հնարավորություններ ունեն՝ նրանք ստանում են գովասանք, ծնողները հպարտանում են նրանց ձեռքբերումներով: Ակադեմիական խնդիրներ ունեցող աշակերտներն արդեն իսկ հաջողակ չեն, նրանք ունեն էմոցիանալ բացասական բաղադրիչը և գովասանքի բացակայությունը:
- Internalizing - Externalizing
- Ինքնագնահատականը բարձրանում է – երբ անձն ինք իրեն արժևորում է, հաջողակ է, նրան հարգում են հասակակցիները:
- Աջակցություն սեփական անձից, ուսուցիչներից, մեծահասակներից, հասակակիցներից, ծնողներից:

Վարքային մարտահրավերներ

- Մեր համակարգում բացակայում է ջանքի համար գնահատումը՝ աշակերտը քրտնաջան աշխատում է, սակայն արդյունքը լավագույնը չէ, նա պետք է միևնույնն է գնահատվի իր գործադրած ջանքի համար:

- Վարքի դրսևորումները - հաջողության չհասնելու արդյունք - աշակերտը չի արժանանում ուշադրության հաջողություններ ունենալու համար, ուստի նա ստանում է ուշադրություն անցանկալի վարք դրսևորելով:

- Վարքը - փորձ է ընդունված լինել հասակակիցների կողմից:

Ուսուցչի պատասխանը վարքին

- Սաստելը, դասարանից դուրս հանելը, տնօրենի մոտ ուղարկելը վարքը չի լավացնում և աշակերտին քիչ է օգնում:

Օգնում է՝

- Վարքի ֆունկցիոնալ գնահատում և դրական վարքի աջակցություն – պարզ նկարագրել անցանկալի վարքը, երբ/ինչ իրավիճակում է այն առաջանում, հետևանքները, որոնք աջակցում են վարքի պահպանմանը
- Տվյալների հավաքագրում դիտարկման միջոցով
- Դրական վարքի ամրապնդում
- Ռազմավարություններ, որոնք օգնում են նվազեցնել անցակալի վարքն ու փախարինել դրանք դրական դրսևորումներով

Վարքը հաղորդակցման ձև է

- Վարքի պատճառը կամ իմաստը հասկանալու համար – ուսուցիչ, հատուկ մանկավարժ, հոգեբան և այլ մասնագետների համագործակցություն:

- Վարքի իմաստը՝

1. ստանալ ինչ-որ բան, օրինակ՝ ուշադրություն
2. որևէ բանից խուսափել – օրինակ՝ աշխատանքը կատարելուց դժվարանում է, ամաչում է սխալվել, վախենում է չհաջողել

- Սենսորային ստիմուլյացիա – շատ է աղմուկը, կամ աշակերտին անհրաժեշտ է շարժվել:

Հարցեր ուսուցչի համար

- Առաջադրանքը համապատասխանո՞ւմ է աշակերտի մակարդակին
- Աշակերտը կարո՞ղ է կարդալ առաջադրանքը
- Միանգամից շա՞տ աշխատանք է աշակերտի համար - աշխատանքային թերթիկի արտաքին տեսքը/առաջադրանքի քանակը սարսափեցնո՞ւմ է աշակերտին
- Աշակերտը էմոցիոնալ զգացմունքներ ո՞ւնի աշխատանքի վերաբերյալ
- Աշակերտը հասկանում է հրահանգները/ պահանջը

Սոցիալական մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- Աշակերտը չունի սոցիալական դժվարություններ – սովորում է սոցիալական հմտություններն առօրյա կյանքում և դիտարկելով: Հակառակ դեպքում սոցիալական հմտություններն անհրաժեշտ է սովորեցնել:
- «Իմ մասին» գիրք
- Ոչ խոսքային հաղորդակցման զարգացում – հաղորդակցվում ենք նաև դեմքի արտահայտությամբ, ժեստերով և այլն - դեմքերի նկարներ – ի՞նչ են փոխանցում - տարբեր ժեստերն ի՞նչ ինֆորմացիա են փոխանցում, ինչ է ասում ձայնը – ուրախ, տխուր, բարկացած:
- Իմպուլսիվությունը վերափոխել ինքնակառավարման - մտածել պատասխանելուց առաջ:
- Մտածել բարձրաձայն – այս իրավիճակը նման է նախկինում հանդիպած իրավիճակների, որո՞նք են հնարավոր լուծումները:
- Անավարտ սոցիալական պատմություններ - աշակերտը պետք է կանխատեսի ավարտն ու լրացնի:
- Երկխոսելու հմտություններ – ինչպես բարևել, ներկայանալ, թեմայի մասին խոսել:

Էմոցիոնալ մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- Բարձրացնել ինքնավստահությունն ու հարգանքը սեփական անձի հանդեպ, ինքնագնահատականը:
- Թույլ տալ աշակերտին հաջողություններ ունենալ և գովել դրանց համար, գնահատել ջանքերը, գրաֆիկների միջոցով տեսանելի դարձնել հաջողությունը:

Վարքի մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- Պարզ հնարներ՝ դասարանում աշակերտի նստելու տեղը, առաջադրանքերի բազմազանությունը, օրագիրը լրացնելը, դասարանում կարգուկանոնը, կառուցվածքն ու կանխատեսելի առօրյա ապահովելը:
- Աշակերտը պետք է իմանա օրվա մեջ ինչ է անելու:
- Դասարանում տեղ կա ամեն ինչի համար, և ամեն բան իր տեղն ունի: Դասարանը պետք է լինի նաև հաճելի վայր սովորելու համար:
- Մեծ աջակցությունից անցում քիչ միջամտությանը – տառ գրել սովորեցնելը ակադեմիական օրինակ - նույն ձևով սովորեցնել ցանկալի/ակնկալելի վարքը
- Հակառակ շղթա – գնդակ խաղալու օրինակ
- Մոդելավորել դրական և խաղաղ վարք - անել այնպես ինչպես ես եմ ասում և անում եմ

Վարքի մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- Դրական, կառուցողական հետադարձ կապ կամ արձագաքն, գովեստ՝
- «Տեղից մի բղավի» - «Այնքան ուրախ եմ, որ ձեռք ես բարձրացնում և սպասում տեղից բղավելուու փոխարեն»
- «Մի վազիր» - «Շնորհակալություն, որ հետևում ես կանոններին և քայլում ես դպրոցում վազելու փոխարեն»

- Սխալը կրկին սովորեցնելու և ամրապնդելու հնարավորություն է, ոչ թե նախատելու

Վարքի մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- Հասկանալի սպասումներ դասարանում – կանոներ կամ ցանկալի/սպասելի վարքի օրինակներ հակիրճ, պարզ ու հասկանալի:
- Կանոներ - տեսանելի շոշափելի վարքին – «Պետք է լավ պահել դասարանում» հասկանալի չէ «Երբ ես բացատրում եմ, աշակերտները լսում են՝ նայելով ինձ» «Խոսելուց առաջ ձեռք բարձրացնել»:
- Սպասումներն անօգուտ են, եթե չեն ամրապնդվում գովասանքով կամ հետևանքով:
- Սպասումները պետք է միշտ լինեն բարձր, և աշակերտներից միշտ պետք է ցույց տալ:հիշեցնել, որ իրենք ունեն ուժեղ կողմեր, որոնք կարող են օգտագործել:
- Հաջողության և հոգատարության միջավայր ստեղծել – անսխալ ուսուցման ռազմավարություններ:

Վարքի մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- Ընտրության հնարավորություն – գրել գրիչով կամ մատիտով, նմանատիպ վարժություններից ընտրել մեկը- երեխան է կառավարում իր անելիքը
- Պատասխանի քարտեր – բոլորին բանավոր հարցնել հնարավոր չի – տարբեր ձևեր պատասխանելու համար – response cards
- Ժամանակի կառավարում
- Նպատակների սահմանում

Վարքի մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- Պասիվ-ագրեսիվ վարք – աշակերտն անկարգ չի, բայց չի կատարում որևէ առաջադրանք
- Ուսուցիչը նախ պետք է հասկանա այս երևույթը՝ պասիվ-ագրեսիվ վարք
- Հնարավոր է, որ աշակերտի համար հրահանգը պարզ չէ կամ առաջադրանքը բարդ է
- Առաջադրանքը պետք է մանրամասն բացատրել և ցույց տալ օրինակներով:
- Առաջադրանքի հրահանգը տրվում է երկու անգամ, ոչ ավել: Երբ աշակերտը տեսնում է, որ մեծահասակը բարկանում է, հունից դուրս է գալիս, նա հասել է իր ուզածին, նա հաղթել է:
- Ուսուցիչը պետք է ընդունի նաև բարկության զգացումը: Սովորեցրեք աշակերտին այլ մոտեցում, քանի որ բարկությունը հարցի լուծում չէ:

Վարքի մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- «Տատիկի կանոնը» – եթե կերար բանջարեղենը, կարող ես նաև պաղպաղակ ուտել։
- Վարքի պայմանագիր - երեխայի համար անցանկալի/չսիրած գործողությունը նախորդում է ցանկալի կամ սիրված գործողությանը։
- Time-out - անցանկալի վարքի դեպքում երեխան
- Այս ռազմավարությունը արդյունավետ է եթե ճիշտ է կիրառվում՝
  - 1-5 րոպե
  - Բոլորն անտեսում են երեխայի վարքն այդ ընթացքում
  - վերադառնալուց հետո երեխան պետք է անմիջապես ներգրավվի ընթացիկ գործունեության մեջ

Վարքի մարտահրավերները հաղթահարելու ռազմավարություններ

- Կոգնիտիվ վարքի կառավարում – երեխան սովորում է իր վարքը կառավարելու և իրեն մոտիվացնելու
  - Սկզբում ուսուցիչը ցույց է տալիս քայլերը, օրինակ՝ նախ պետք..., հետո ես պետք է..., վերջում պետք է հասկանամ ինչու չստացվեց, կամ ինչ արեցի, որ ստացվեց: Հաջորդ անգամ կկրկնեմ այս քայլերը կամ չեմ անի այս ինչ քայլը:

- Տուն - դպրոց շատ սերտ համագործակցություն

Գրականություն

- Lerner, J.W. and Johns, B.H., (2005).*Learning Disabilities and Related Disabilities, Strategies for Success* (13th Ed.).
- Turnbull, A., Turnbull, R., Wehmeyer, M.L. (2007). *Exceptional Lives: Special education in today's schools* (5th ed.). Columbus, OH: Prentice-Hall.